# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվականի** N 199-Ա

### <<ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 9/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Սևանի հացի գործարան>> ՍՊԸ-ի 2024 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 16-ին 731 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Սևանի հացի գործարան>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Պ. Սևակ 9/5 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Սևանի հացի գործարան>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

ՂԵԿԱՎԱՐ x Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2024 **թվականի** N 198 Ա

**<<ՑԱՅԳ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 248/23 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Ցայգ>> ՍՊԸ-ի 2023 թվականի դեկտեմբերի 29-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 15-ին 684 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել <<Ցայգ>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Աբովյան 248/23 շենքի տանիքին տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 15 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Ցայգ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Մինասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվականի** N 197-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 147 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Անդրանիկ Սարգսյանի 2024 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 15-ին 694 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել Ա/Ձ Անդրանիկ Սարգսյանին Գյումրի քաղաքի Երևանյան խճ. 147 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 1,6 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Անդրանիկ Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

X

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2024 **թվականի** N 196-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏՈՒՇ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՇԻՐԱԿԱՑԻ 56 Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Արտուշ Թորոսյանի 2024 թվականի հունվարի 09-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 10-ին 379 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Արտուշ Թորոսյանին Գյումրի քաղաքի Շիրակացի 56 գ հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1,92 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Արտուշ Թորոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2024 **թվականի** N 195-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 19/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Հարություն Երեմյանի 2024 թվականի հունվարի 11-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 11-ին 504 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Հարություն Երեմյանին Գյումրի քաղաքի Երևանյան Խճ. 19/2 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0,28 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Հարություն Երեմյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվականի** N 194-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Գրիգոր Մանուկյանի 2024 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 16-ին 719 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել Ա/Ձ Գրիգոր Մանուկյանին Գյումրի քաղաքի Պ. Սևակ 1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Գրիգոր Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

X

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2024 **թվականի** N 193-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 8/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Մարիամ Խաչատրյանի 2024 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 15-ին 699 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել Ա/Ձ Մարիամ Խաչատրյանին Գյումրի քաղաքի Պ. Սևակ 8/5 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 1,25 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Մարիամ Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

X

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվականի** N 192-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԱՄ ՄԵԼՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ 5 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Մարիամ Մելոյանի 2024 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 15-ին 695 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել Ա/Ձ Մարիամ Մելոյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի 5 4/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Մարիամ Մելոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվականի** N 191-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄՈՍԿՈՎ ԽԵԲՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ 105/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Մոսկով Խեբոյանի 2024 թվականի հունվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունվարի 16-ին 721 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել Ա/Ձ Մոսկեվ Խեբոյանին Գյումրի քաղաքի Տերյան 105/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (պաստառ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Մոսկով Խեբոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.01.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 թվականի N 190 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 29/8 ՀԱՍՑԵԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոցի տվյալ տարածքի կառուցապատման նախագծի պահանջները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Չեղարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վ.Սարգսյան փողոց N 29/8 հասցեի վկայականը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 27062014-08-0018 վկայականը չեղարկելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

25.01.2024

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 թվական N 189-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՏԵԼԼԱ ԱՐԹՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արթուր Խաչիկի Միքայելյանը (անձնագիր՝ AP 0675230, տրված՝ 08.02.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի (Չարենցի փող.31 շենք 16 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի հունվարի 19-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 1999 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 463 որոշմամբ Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանը հատկացվել է Արթուր Խաչիկի Միքայելյանի ութ անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 աղջկան, մորը, եղբորը, եղբոր կնոջը, եղբոր աղջկան և տրվել թիվ 16 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 1999 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 463 որոշմամբ տրված թիվ 16 միասնական օրդերը, Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 8/12-3680 գրությունը, «Բարեկամություն» համատիրության 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 0/127 տեղեկանքը, Արթուր Խաչիկի Միքայելյանի, Արմենուհի Ռոբերտի Միքայելյանի, Ստելլա Արթուրի Միքայելյանի, Մարիամ Արթուրի Միքայելյանի, Օհաննա Հաբեթի Միքայելյանի անձնագրերի պատճենները, ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ/1329/02/08 վճռի պատճենը, Գյումրի քաղաքի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 16 /1 հասցեի բնակարանի 2009 թվականի հուլիսի 27-ին տրված թիվ 2637970 սեփականության վկայականի պատճենը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ/1329/02/08 վճռի համաձայն քաղաքացիներ՝ Արսեն Խաչիկի Միքայելյանի, Լուսինե Սաղաթելի Միքայելյանի և նրանց ընտանիքի անդամների՝ անչափահաս երեխաների առանձին վարձակալական իրավունքը ճանաչվել է Գյումրի քաղաքի «Անի» թաղամասի Ե.Չարենցի փողոցի թիվ 31 շենքի թիվ 16/1 բնակարանի երկու սենյակների նկատմամբ և տրվել է 2637970 սեփականության վկայականը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի հունվարի 19-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արթուր Խաչիկի Միքայելյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

### 1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Գյումրի համայնքի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 16 հասցեի 41.38 (քառասունմեկ ամբողջ երեսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ 2360092 վկայական):

բ) Քաղաքացիներ՝ Արթուր Խաչիկի Միքայելյանի, Արմենուհի Ռոբերտի Միքայելյանի և նրանց ընտանիքի մյուս անդամների օգտագործմանն է թողնվել բնակարանի թիվ 1 24.75 քմ մակերեսով և թիվ 5 11.9 քմ մակերեսով սենյակները: Բնակարանի կոմունալ և օժանդակ հարմարությունները՝ խոհանոցը, լողասենյակը, զուգարանը և միջանցքը թողնվել է կողմերի համատեղ օգտագործմանը և տիրապետմանը (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ/1329/02/08 վճիռի պատճե)

գ) Գյումրի համայնքի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 12 հասցեի բնակարանը 1999 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 1999 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 463 որոշում ):

դ) Գյումրի քաղաքի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանում հաշվառված բնակվում են՝ Արմենուհի Ռոբերտի Միքայելյանը 2000 թվականից, Արթուր Խաչիկի Միքայելյանը 2000 թվականից, Ռոբերտ Արթուրի Միքայելյանը 2012 թվականից, հաշվառված է ևս 4 անձ (հիմք՝ Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 8/12-3680 գրություն, «Բարեկամություն» համատիրության 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 0/127 տեղեկանք) :

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Արթուր Խաչիկի Միքայելյանի, Օհաննա Հաբեթի Միքայելյանի, Ստելլա Արթուրի Միքայելյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Ստելլա Արթուրի Միքայելյանի կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Օհաննա Հաբեթի Միքայելյանի կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Տ.Ճարտարապետի փողոց 28ա շենք 11 բնակարան հասցեի անշարժ գույքի նկատմամբ: Արթուր Խաչիկի Միքայելյանի կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Շչերինի փողոց 7/4 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՏ-18122023-99-0497, N ԱՏ-18122023-99-0481, N ԱՏ-18122023-99-0440, տեղեկանքներ):

գ)Քաղաքացի՝ Մարիամ Արթուրի Միքայելյանի անվամբ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Անի թաղամաս Ա.Խաչատրյան փողոց 19 շենք 5 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք /բաժնեմասը՝ 1/9: Նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է վերոնշյալ անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՏ-18122023-99-0233 տեղեկանք):

է)Քաղաքացի Արմենուհի Ռոբերտի Միքայելյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Շահումյան փողոց 158/14 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր նրա կողմից ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք.Շչեդրինի փողոց 7/4 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ, իսկ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ համայնք Գյումրի ք. Շահումյան փողոց 158/14 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՏ-1812223-99-0515 տեղեկանք):

ը) Քաղաքացի Արթուր Խաչիկի Միքայելյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Չարենցի փողոց 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանը վարձակալել է 1999 թվականի հոկտեմբերի 18-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի

օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի՝ Օհաննա Հաբեթի Միքայելյանի կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Տ.Ճարտարապետի փողոց 28ա շենք 11 բնակարան հասցեի անշարժ գույքի նկատմամբ: Արթուր Խաչիկի Միքայելյանի կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Շչերինի փողոց 7/4 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Քաղաքացի՝ Մարիամ Արթուրի Միքայելյանի անվամբ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Անի թաղամաս Ա.Խաչատրյան փողոց 19 շենք 5 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք /բաժնեմասը՝ 1/9: Նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է վերոնշյալ անշարժ գույքի նկատմամբ:

Քաղաքացի Արմենուհի Ռոբերտի Միքայելյանի անվամբ Շիրակի մարզ, համանյք Գյումրի ք. Շահումյան փողոց 158/14 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր նրա կողմից ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք.Շչեդրինի փողոց 7/4 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ, իսկ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ համայնք Գյումրի ք. Շահումյան փողոց 158/14 բնակելի տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և

վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Արթուր Խաչիկի Միքայելյանի դիմումը բավարարեց մասամբ:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի Ե.Չարենցի 31 շենք թիվ 16 հասցեի բնակարանի 41.38 (քառասունմեկ ամբողջ երեսունութ հարյուրերորդական ) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր կոմունալ հարմարություններով բնակարանի 28.09 (քսանութ ամբողջ իննը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենյակները նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Ստելլա Արթուրի Միքայելյանին ծնված՝ 1991 թվականին որպես սեփականություն: Բնակարանի կոմունալ և օժանդակ հարմարությունները՝ խոհանոցը, լողասենյակը, զուգարանը և միջանցքը թողնել կողմերի համատեղ օգտագործմանը և տիրապետմանը
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Ստելլա Արթուրի Միքայելյանին:
3. Քաղաքացի՝ Ստելլա Արթուրի Միքայելյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ստելլա Արթուրի Միքայելյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

25.01.2024

X

**2024թիվ Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվական** N 188-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՅՈՒՐԻԿ ՍԱՐԳՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԶԻՆԱԻԴԱ ՀԱՄԱՅԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էդուարդ Ժորայի Խաչատրյանը (անձնագիր՝ AR0622152, տրված՝ 13.03.2018թ., 064-ի կողմից, հաշվառված՝ք.Գյումրի Խրիմյան Հայրիկի փողոց հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Յուրիկ Սարգսի Խաչատրյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի հունվարի 9-ին դիմում է ներկայացրել Գյումրու համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մ.Գորկու փողոց 76 շենք, թիվ 26 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով Յուրիկ Սարգսի Խաչատրյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն օտարելու գործընթացը շարունակել:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի ապրիլի 21-ի Շ-1160/132 գրությունը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023թվականիհունիսի 12-ի №8/63-507 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023թվականի հունիսի 13-ի տեղեկանքը, «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ФԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի ապրիլի 19-ի տեղեկանքը, «Սեդրակ Մուրադյան» ԱՁ-ի 2023 թվականի ապրիլի 18-ի եզրակացությունը, ՀՀ ԱՆ ՔԿԱԳ-ի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի N 40372-2023 գրությունը, Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 8/62-2638 գրությունը,Զինաիդա Համայակի Խաչատրյանի և Յուրիկ Սարգսի Խաչատրյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Մ.Գորկու փողոց 76 շենք, թիվ 26 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, Սիրուշ Խաչատուրի Խաչատրյանի մահվան վկայականի պատճենը, :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական

ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի №46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի հունվարի 9-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Յուրիկ Սարգսի Խաչատրյանի լիազորված անձ՝ Էդուարդ Ժորայի Խաչատրյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Մ.Գորկու փողոց 76 շենք, թիվ 26 հասցեի 35.34 (երեսունհինգ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ №19052023-08-0022 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ քաղխորհրդի գործադիր կոմիտեի կողմից Գորկու փողոցի թիվ 76 շենքի բնակարանների բաշխման նյութերը չեն պահպահվել, հետևաբար վերոնշյալ շենքի թիվ 26 բնակարանի հատկացման վերաբերյալ տեղեկատվություն չկա (հիմք՝ '«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի ապրիլի 21 -ի Շ-1160/132 գրություն):

գ) Գյումրի համայնքի Մ.Գորկու փողոց 76 շենք, թիվ 26 հասցեի բնակարանում հաշվառված բնակվում են՝ Զինաիդա Համայակի Խաչատրյանը 06/07/2018թվականից և Յուրիկ Սարգսի Խաչատրյանը 06/07/2018թվականից (հիմք՝Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023թվականի հունիսի 12-ի №8/63-507 գրություն և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի հունիսի 13-ի տեղեկանք):

դ) Գյումրի համայնքի Գորկի 76 շենք, թիվ 26 հասցեի բնակարանի հատվածում կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է **երկրորդ** աստիճանի, բնակարանը պիտանի է շահագործման համար (հիմք՝«Սեդրակ Մուրադյան» ԱՁ-ի 2023 թվականի ապրիլի 18-ի եզրակացություն):

ե) Քաղաքացի Յուրիկ Խաչատրյանը /ք. Գյումրի, Գորկու 76 շենք, 26 բն./ «Գյումրի» ցանցում հանդիսանում է բաժանորդ 2002 թվականից մինչև օրս (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի տեղեկանք):

զ) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Զինաիդա Համայակի Խաչատրյանի և Յուրիկ Սարգսի Խաչատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքնեիի պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 21/04/2023թ. № ԱՏ-21042023-99-0347 տեղեկանք):

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության
կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի
հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Յուրիկ Սարգսի Խաչատրյանի լիազորված անձ՝ Էդուարդ Ժորայի Խաչատրյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

1. Գյումրի համայնքի Մ.Գորկու փողոց 76 շենք, թիվ 26 հասցեի 35.34 (երեսունհինգ ամբողջ երեսունչորս հարյուրերրորդական)քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Յուրիկ Սարգսի Խաչատրյանին ծնված 1940 թվականին,
2) Զինաիդա Համայակի Խաչատրյանին ծնված 1949 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Զինաիդա Համայակի Խաչատրյանին և Յուրիկ Սարգսի Խաչատրյանին:
3. Քաղաքացիներ՝ Զինաիդա Համայակի Խաչատրյանին և Յուրիկ Սարգսի Խաչատրյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Զինաիդա Համայակի Խաչատրյանին և Յուրիկ Սարգսի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2024թիվ Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2024 **թվական** N 187-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՈՐԳՈՒ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ԳԵՈՐԳՈՒ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմենակ Սուրենի Մանուկյանը (անձնագիր՝ AN 0762485, տրված՝ 016-ի կողմից 18.12.2013թ., հաշվառված՝ ք. Գյումրի,Գարեգին Ա փողոց, 12Բ շենք, թիվ 20 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Հովհաննես Գեորգու Ղուկասյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի սեպտեմբերի 13-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին 2023 թվականի ապրիլի 27-ին տրված դիմումի նվիրատվության գործընթացը շարունակել՝ խնդրելով Գյումրի համայնքի Գոգունցի 9 շենք թիվ 1 բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի Հովհաննես Գեորգու Ղուկասյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 31-ի Շ-913/108 գրությունը, 2023 թվականի դեկտեմբերի 1-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N-8/63-1031 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի մայիսի 5-ի թիվ 884 տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի նայիսի 2-ի եզրակացությունը, Հովհաննես Գեորգու Ղուկասյանի լիազորագիրը Գյումրի համայնքից նվեր ընդունելու անշարժ գույք, 2023 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Անահիտ Գեորգու Ղուկասյանի անձնագրի պատճենը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 24-ի N 1301-Ա հասցեավորման որոշումը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով 2023 թվականի սեպտեմբերի 13-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Հովհաննես Գեորգու Ղուկասյանի լիազորված անձ՝ Արմենակ Սուրենի Մանուկյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գոգունցի փողոց 9/1 հասցեի 50.77 (հիսուն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 12092023-08-0018 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Գոգունցի փողոց 9 շենքի թիվ 1 ֆոնդի տան հատկացման հիմքերը չեն պահպանվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 31 -ի Ծ-913/108 գրություն):

գ) Գոգունցի փողոց, 9 շենք, 1 հասցեագրությամբ հաշվառված բնակելի ֆոնդի տան և դրա փաստացի զբաղեցրած 71.22 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ Շիրակի մարզ, Գյումրի ք, Ա.Գոգունցի փողոց, 9/1 (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 24-ի N 1301-Ա որոշում):

դ) Քաղաք Գյումրի Ա.Գոգունցի փողոց 9 շենք թիվ 1 հասցեում հաշվառված բնակվում են՝ Անահիտ Գեորգու Ղուկասյանը 1980 թվականից, Հովհաննես Գեորգու Ղուկասյանը 1990 թվականից, (հիմք՝ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N 8/63-1031 գրություն, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023թվականի մայիսի 5-ի N 884 տեղեկանք):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Անահիտ Գեորգու Ղուկասյանի և Հովհաննես Գեորգու Ղուկասյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մայիսի 10-ի N ԱՏ-10052023-99-0511, N ԱՏ-1005-99-0504 տեղեկանքներ):

զ) Գյումրու Գոգունցի փողոց 9 շենք թիվ 1բնակարանի կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ, մասնակի երրորդ աստիճանի: Տան հիմնական բնակելի և օժանդակ հատվածը կարելի է շահագործել (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մայիսի 2-ի եզրակացություն):

է) Քաղաքացի Հովհաննես Գեորգու Ղուկասյանը /Ք. Գյումրի, Գոգունցի փողոց 9 շենք, 1 բն. / Գյումրի էլցանցի բաժանորդ է 2002 թվականից մինչև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մայիսի 5-ի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ):

ը) Քաղաքացի Հովհաննես Գեորգու Ղուկասյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի -ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց,ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության

քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Հովհաննես Գեորգու Ղուկասյանի լիազորված անձ՝ Արմենակ Սուրենի Մանուկյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գոգունցի փողոց 9/1 հասցեի 50.77 (հիսուն ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
    1) Հովհաննես Գեորգու Ղուկասյանին ծնված 1962 թվականին,
    2) Անահիտ Գեորգու Ղուկասյանին ծնված՝ 1963 թվականին

    որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Հովհաննես Գեորգու Ղուկասյանին, Անահիտ Գեորգու Ղուկասյանին :
3. Քաղաքացներ՝ Հովհաննես Գեորգու Ղուկասյանին, Անահիտ Գեորգու Ղուկասյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Հովհաննես Գեորգու Ղուկասյանին, Անահիտ Գեորգու Ղուկասյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2024թիվ Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2024 **թվական** N 186-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՂԵԿՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### *I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ*

Քաղաքացի Հերմինե Ռաֆիկի Հովհագյանը (անձնագիր AS 0613316, տրված՝ 17.05.2019թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Նորավան փողոց 30շենք, 8 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի նոյեմբերի 6-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Հ. Ավետիսյան փողոց թիվ 44/2 հասցեի բնակելի տունը օտարել նվիրատվության եղանակով որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Քաղաքացիներ Ազնիվ Նիկոլի Աղեկյանի և Հերմինե Ռաֆիկի Հովհագյանի հետ բնակելի տարածության օգտագործման վարձակալության պայմանագիր կնքելու մասին» թիվ 2265-Ա որոշմամբ կնքվել է Հ.Ավետիսյան փողոց 44/2 հասցեի 55.37 (հիսունհինգ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, բնակելի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 73.89 (յոթանասուներեք ամբողջ ութսունինը հարյուրերորդական ) քառակուսի մետր մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր անորոշ ժամկետով, որն ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում (հիմք՝ 05.02.2016թ. №593 վարձակալության պայմանագիր և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №17102023-08-0020 վկայական):

Քաղաքացի Ազնիվ Նիկոլ Աղեկյանը մահացել է 2017 թվականի մայիսի 6-ին (հիմք՝ ԱԲ 260915 վկայական):

Քաղաքացի Ազնիվ Նիկոլ Աղեկյանի մահից հետո 2023 թվականի հոկտեմբերի 11-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսացել տղան՝ Սամվել Գուրգենի Աղեկյանը և տրվել է №17102023-08-0020 վարձակալության վկայական քաղաքացիներ Սամվել Գուրգենի Աղեկյանի և Հերմինե Ռաֆիկի Հովհագյանի անվամբ:

Դիմումին կից ներկայացվել է №17102023-08-0020 վարձակալության վկայականի պատճենը, 2016 թվականի փետրվարի 5-ի վարձակալության պայմանագրի պատճենը, 2023 թվականի հոկտեմբերի 11-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճենը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 3-ի N 2306477064671 տեղեկանքը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում»

ՓԲԸ-ի 2023 թվականի նոյեմբերի 3-ի տեղեկանքը, Սամվել Գուրգենի Աղեկյանի նույնականացման քարտի, Հերմինե Ռաֆիկի Հովհազյանի անձնագրի պատճենները, ՀՀ ԱԻՆ «ՍՊՀԱԾ» ՊՈԱԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի եզրակացությունը, գույքի վարձակալության մուծման տեղեկանքը, Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2265-Ա որոշման պատճենը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի նոյեմբերի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվաձi 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Հերմինե Ռաֆիկի Հովհազյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները :

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Ավետիսյան փողոց 44/2 հասցեի 55.37 (հիսունհինգ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 17112015-08-0020 վկայական):

բ) Շիրակ Գյումրի Նորավան փողոց 30 շենք թիվ 8 հասցեում հաշվառված բնակվում է 1 անձ՝ Հերմինե Ռաֆիկի Հովհազյանը 2012 թվականից (հիմք՝ 2023թվականի նոյեմբերի 3-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230647064671, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի նոյեմբերի 3-ի տեղեկանքներ):

գ) Բնակարանի կամ բնակելի տան նկատմամբ քաղաքացի՝ Սամվել Գուրգենի Աղեկյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացու անվամբ Հ.Ավետիսյան փողոց 44/2 բնակելի տուն, Գյումրի ք. Հ.Ավետիսյան փողոց 44/3 օժանդակ շինություն հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված է վարձակալության իրավունք,1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N ԱՏ-27102023-99-0614 տեղեկանք):

դ) Քաղաքացի Հերմինե Ռաֆիկի Հովհազյանի անվամբ Շիրակի մարզ համայնք Անի գյուղ Գուսանագյուղ 3 փողոց 3 նրբանցք 3 բնակելի տուն և համայնք Անի գյուղ Գուսանագյուղ փողոց 17 հողամաս հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ համայնք Անի գյուղ Գուսանագյուղ 3 փողոց 3 նրբանցք 3 բնակելի տուն և համայնք Անի գյուղ Գուսանագյուղ փողոց 17 հողամաս հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Հ.Ավետիսյան փողոց 44/2 բնակելի տուն, համայնք Գյումրի ք. Հ.Ավետիսյան փողոց 44/3 օժանդակ շինություն հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված է վարձակալության իրավունք (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների

առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 28-ի N ԱՏ-28102023-99-0081 տեղեկանք):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նորավան թաղամաս 30 շենք 8 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ ՀՀ ԱԻՆ «ՍՊՀԱԾ» ՊՈԱԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի եզրակացություն ):

զ) Քաղաքացի Հերմինե Ռաֆիկի Հովհագյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Հ.Ավետիսյան փողոց 44/2 հասցեի բնակելի տունը վարձակալել է 2016 թվականի հունվարի 29-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող

գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

Քաղաքացի Հերմինե Ռաֆիկի Հովհագյանի անվամբ Շիրակի մարզ համայնք Անի գյուղ Գուսանագյուղ 3 փողոց 3 նրբանցք 3 բնակելի տուն և համայնք Անի գյուղ Գուսանագյուղ փողոց 17 հողամաս հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ համայնք Անի գյուղ Գուսանագյուղ 3 փողոց 3 նրբանցք 3 բնակելի տուն և համայնք Անի գյուղ Գուսանագյուղ փողոց 17 հողամաս հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Հերմինե Ռաֆիկի Հովհագյանի դիմումը բավարարեց մասամբ:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 9-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի, 54-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Չեղյալ համարել Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Քաղաքացիներ Ազնիվ Նիկոլի Աղեկյանի և Հերմինե Ռաֆիկի Հովհագյանի հետ Գյումրի համայնքի Հ.Ավետիսյան փողոց 44/2 հասցեի բնակելի տան վաձակալության պայմանագիր կնքելու մասին» N 2265-Ա որոշումը:

2. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Ավետիսյան փողոց 44/2 հասցեի 55.37 (հիսունհինգ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Սամվել Գուրգենի Աղեկյանին ծնված՝ 1963 թվականին

որպես սեփականություն :

3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Սամվել Գուրգենի Աղեկյանին :
4. Քաղաքացի Սամվել Գուրգենի Աղեկյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին ՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սամվել Գուրգենի Աղեկյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**2024թիվ Գյումրի համայնք**

Недействительная подпись

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվական** N 185-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱՌՆԻԿ ՎԱՐԴԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սյուզաննա Վարդանի Մկրտչյանը (անձնագիր AT 0537969, տրված՝ 016-ի կողմից 10.08.2020թ., հաշվառված՝ ք. Գյումրի Շիրակացու փողոց 4 շենք, թիվ 2 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի դեկտեմբերի 25-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Շիրակացի 4 շենք, թիվ 2 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 1124 որոշմամբ Շիրակացի 4 շենք թիվ 2 բնակարանը հատկացվել է Վարդան Մկրտչյանի 4 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային, աղջկան:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 1124 որոշմամբ տրված թիվ 2 միասնական օրդերը, 2023 թվականի դեկտեմբերի 4-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 23016016545 տեղեկանքը, 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի տեղեկանքը, Սյուզաննա Վարդանի Մկրտչյանի,Գառնիկ Վարդանի Մկրտչյանի, Գայանե Միասնիկի Նիկոյանի անձնագրերի, Վարդան Մարտունիկի Մկրտչյանի նույնականացման քարտի պատճենները, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի նոյեմբերի 2-ի եզրակացությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Սյուզաննա Վարդանի Մկրտչյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա. Շիրակացու փողոց 4 շենք, թիվ 2 հասցեի 84.02 (ութսունչորս ամբողջ երկու հարյուրերրդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 04122023-08-0033 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց 4 շենք թիվ 2 բնակարանը 2008 թվականի հունիսի 5-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 1124 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Ա. Շիրակացու փողոց 4 շենք թիվ 2 հասցեում հաշվառված բնակվում են՝ Գայանե Միասնիկի Նիկոյանը 2008 թվականից, Վարդան Մարտունիկի Մկրտչյանը 2008 թվականից, Գառնիկ Վարդանի Մկրտչյանը 2011 թվականից, Սյուզաննա Վարդանի Մկրտչյանը 2011 թվականից (հիմք՝ 2023թվականի դեկտեմբերի 4-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 23016016545, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ Վարդան Մարտունիկի Մկրտչյանի, Գառնիկ Վարդանի Մկրտչյանի, Սյուզաննա Վարդանի Մկրտչյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: 1998թ. մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում Վարդան Մարտունիկի Մկրտչյանի կողմից ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է 08.11.2008թ.Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Մսի կոմբինատ թաղամասի 1-ին շարք, թիվ 6/2 բնակելի տան հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N ԱՏ-26102023-99-0249, N ԱՏ-26102023-99-1147, , N ԱՏ-25102023-99-0525 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի՝ Գայանե Միասնիկի Նիկոյանի անվամբ մարզ Արագածոտն,համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ սեփականաշնորհված հողամասերի, մարզ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 3-րդ փողոց 38 հողամասի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Արագածոտն,համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 1 փողոց 4 փակուղի 4 հասցեի անշարժ գույքի նկատմամբ: Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Մսի կոմբինատ թաղամասի 1-ին շարք, թիվ 6/2 բնակելի տան հասցեով անշարժ գույքի նկատմամբ: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Արագածոտն,համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ սեփականաշնորհված հողամասերի, մարզ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 3-րդ փողոց 38 հողամասի, համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 3-րդ փողոց 38 հողամասի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք (հիմք՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N ԱՏ-26102023-99-0969 տեղեկանք) :

զ) Գյումրու Շիրակացի փողոց, 4 բազմաբնակարան շենքի թիվ 2 բնակարանի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի: Շենքի կրող կոնստրուկցիաների

վիճակը գնահատվում է բավարար (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի նոյեմբերի 2-ի եզրակացություն):

է) Քաղաքացի Սյուզաննա Վարդանի Մկրտչյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Շիրակացի 4 շենք թիվ 2 բնակարանը վարձակալել է 2008 թվականի հունիսի 5-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

## 2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում է համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

ՀՀ տարածքում 1998թ. մարտի 1-ից առ այսօր Վարդան Մարտունիկի Մկրտչյանի կողմից օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է 08.11.2008թ. Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Մսի կոմբինատ թաղամասի 1-ին շարք, թիվ 6/2 բնակելի տան հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Քաղաքացի՝ Գայանե Միասնիկի Նիկոյանի անվամբ մարզ Արագածոտն,համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ սեփականաշնորհված հողամասերի, մարզ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 3-րդ փողոց 38 հողամասի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Արագածոտն,համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 1 փողոց 4 փակուղի 4 հասցեի անշարժ գույքի նկատմամբ: Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Մսի կոմբինատ թաղամասի 1-ին շարք, թիվ 6/2 բնակելի տան հասցեով անշարժ գույքի նկատմամբ: 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Արագածոտն,համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ սեփականաշնորհված հողամասերի, մարզ Արագածոտն, համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 3-րդ փողոց 38 հողամասի, համայնք Թալին գյուղ Նոր Արթիկ 3-րդ փողոց 38 հողամասի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Սյուզաննա Վարդանի Մկրտչյանի խնդրանքը բավարարեց մասամբ:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա. Շիրակացու փողոց 4 շենք, թիվ 2 հասցեի 84.02 (ութսունչորս ամբողջ երկու հարյուրերդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Սյուզաննա Վարդանի Մկրտչյանին ծնված՝ 2002 թվականին,
   2) Գառնիկ Վարդանի Մկրտչյանին ծնված՝ 2006 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական

գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Սյուզաննա Վարդանի Մկրտչյանին, Գառնիկ Վարդանի Մկրտչյանին:

3. Քաղաքացինր Սյուզաննա Վարդանի Մկրտչյանին, Գառնիկ Վարդանի Մկրտչյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սյուզաննա Վարդանի Մկրտչյանին, Գառնիկ Վարդանի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2024թիվ Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվական** N 184-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԶԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### . ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Մոսկով Պարույրի Խեբոյանը (անձնագիր՝ AV 0209902, տրված՝ 06.05.2022թ., 016-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Ա.Շիրակացու 8-րդ թաղ. 2 շենք թիվ 44 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի դեկտեմբերի 25-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Խր.Հայրիկ 40 շենք թիվ 15 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2003թվականի օգոստոսի 15-ի թիվ 1215 որոշմամբ Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ 40 շենք թիվ 15 հասցեի բնակարանը հատկացվել է քաղաքացի Մանվել Խաչատրյանի չորս անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 տղային և տրվել թիվ 15 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2003 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1215 որոշմամբ տրված թիվ 15 միասնական օրդերը, 2023 թվականի դեկտեմբերի 5-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N-8/62-2419 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023թվականի դեկտեմբերի 21-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության եզրակացությունը, Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի,Մանվել Արտավազդի Խաչատրյանի, Աշոտ Մանվելի Խաչատրյանի, Արթուր Մանվելի Խաչատրյանի լիազորագրերը Գյումրի համայնքից Խր.Հայրիկ 40 շենք թիվ 15 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին հարուցվել է

վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի լիազորված անձ՝ Մոսկով Պարույրի Խեբոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Ք. Գյումրի Թբիլիիսյան խճ. 40 շենք, թիվ 15 հասցեի 71.90 (յոթանասունմեկ ամբողջ իննսուն հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1145247 վկայական):

բ) Գյումրի համայնքի Խր.Հայրիկ 40 շենք թիվ 15 հասցեի բնակարանը 2003 թվականի օգոստոսի 15-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2003 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1215 որոշմամբ տրված թիվ 15 միասնական օրդեր):

գ) Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ փողոց (խճուղի) 40 շենք 15 հասցեում հաշվառված են՝ Սերգո Արտավազդի Խաչատրյանը 2022 թվականից, Ռուզան Սերյոժայի Խաչատրյանը 2005 թվականից, Մանվել Արտավազդի Խաչատրյանը 2005 թվականից, բնակվում է 4 անձ (հիմք՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N-8/62-2419 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023թվականի դեկտեմբերի 21-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի դեկգտեմբեր ի5-ի N US-05122023-99-0098 տեղեկանք):

ե) Գյումրու Խրիմյան Հայրիկ փողոց 40 շենք թիվ 15 բնակարանի հատվածում կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ –երրորդ աստիճանի (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության եզրակացություն):

զ) Քաղաքացի Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի ընտանիքը ընտանիքը Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ 40 շենք թիվ 15 հասցեի բնակարանը վարձակալել է 2003 թվականի օգոստոսի 15-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացիներ՝ Մանվել Արտավազդի Խաչատրյանը, Աշոտ Մանվելի Խաչատրյանը և Արթուր Մանվելի Խաչատրյանը հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Ռուզան Սերյոժայի Խաչատրյանի լիազորված անձ՝ Մոսկով Պարույրի Խեբոյանի դիմումը բավարարեց մասամբ:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ք. Գյումրի Թբիլիսյան խճ. 40 շենք, թիվ 15 hասցեի 71.90 (յոթանասունմեկ ամբողջ իննսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Ռուզան Սերյոժայի Խաչատրյանին ծնված՝ 1960 թվականին

   որպես սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Ռուզան Սերյոժայի Խաչատրյանին :
3. Քաղաքացի՝ Ռուզան Սերյոժայի Խաչատրյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռուզան Սերյոժայի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2024թիվ Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2024 **թվականի** N 183-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵԼԱՆՅԱ ՄԻՍԱԿԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Մելանյա Միսակի Թումասյանը (անձնագիր՝ AT 0320419, տրված՝ 064-ի կողմից 03.12.2019թ., հաշվառված՝ ք. Գյումրի,Գարեգին Ա փողոց,12ա շենք, թիվ 18 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023թվականի նոյեմբերի 16-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Գարեգին Ա փողոց 12ա շենք թիվ 18 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել որպես սեփականություն:

Լենինականի շենքերի ու շինությունների դիստանցիայի ՀԿՎ ժ.դ. ՆՕԴ-3 բնակ. կենցաղային հանձնաժաղովի 1980 թվականի հունիսի 30-ի N 8 որոշմամբ Արվելաձե փողոց (ներկայիս Գարեգին Ա փողոց) 12ա շենքի 18 բնակարանը տրամադրվել է Միսակ Սետրակի Թումասյանի 4 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային, աղջկան (հիմք՝ Լենինականի շենքերի ու շինությունների դիստանցիայի ՀԿՎ ժ.դ. ՆՕԴ-3 բնակ. կենցաղային հանձնաժաղովի 1980 թվականի հունիսի 30-ի N 8 որոշմամբ տրված թիվ 462 օրդեր ):

Քաղաքացիներ՝ Միսակ Սեդրակի Թումասյանը, Օլգա Բենիամին Թումասյանը, Լյովա Միսակի Թումասյանը մահացել են (հիմք՝ ԱԱ N 162375, ԱԱ N 082222, III- ԵՏ-No 772951 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի շենքերի ու շինությունների դիստանցիայի ՀԿՎ ժ.դ. ՆՕԴ-3 բնակ. կենցաղային հանձնաժողովի 1980 թվականի հունիսի 30-ի N 8 որոշմամբ տրված թիվ 462 օրդերը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N 8/63-941 գրությունը, «Ավրորա» համատիրության 2023 թվականի հոկտեմբերի 16-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի հոկտեմբերի 18-ի եզրակացությունը, Մելանյա Միսակի Թումասյանի անձնագրի պատճենը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին

մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով 2023 թվականի նոյեմբերի 16-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Մելանյա Միսակի Թումասյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Գյումրի համայնքի Արվելաձե փողոց 12ա շենք, թիվ 18 հասցեի 75.22 (յոթանասունհինգ ամբողջ քսաներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1164961 վկայական):

բ) Լենինականի շենքերի ու շինությունների դիստանցիայի ՋԿՎ ժ.դ. ՆՕԴ-3 բնակ. կենցաղային հանձնաժաղովի 1980 թվականի հունիսի 30-ի N 8 որոշմամբ Արվելաձե փողոց (ներկայիս Գարեգին Ա փողոց) 12ա շենքի 18 բնակարանը տրամադրվել է Միսակ Սետրակի Թումասյանի 4 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային, աղջկան (հիմք՝ Լենինականի շենքերի ու շինությունների դիստանցիայի ՋԿՎ ժ.դ. ՆՕԴ-3 բնակ. կենցաղային հանձնաժաղովի 1980 թվականի հունիսի 30-ի N 8 որոշմամբ տրված թիվ 462 օրդեր ):

գ) Ք. Գյումրի Գարեգին Ա փող. 12Ա շենք 18 հասցեում հաշվառված են Ռայա Ալբերտի Խուրշուդյանը 1992 թվականից, Մելանյա Միսակի Թումասյանը 1991 թվականից, Արամ Աշոտի Թումասյանը 2002 թվականից, բնակվում է Մելանյա Միսակի Թումասյանը (հիմք՝ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N 8/63-941 գրություն, «Ավրորա» համատիրության 2023 թվականի հոկտեմբերի 16-ի տեղեկանք):

դ) Քաղաքացի Մելանյա Միսակի Թումասյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 16-ի N ԱՏ-16102023-99-0334 տեղեկանք;

ե) Գյումրի քաղաքի Գարեգին ա փողոց 12ա շենքի թիվ 18 բնակարանի վնասվածությունը գնահատվում է զրո աստիճանի, շենքի կրող համակարգը գտնվում է լավ վիճակում:Ապահովված է շենքի ամրությունն ու սեյսմակայունությունը (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի հոկտեմբերի 18-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Մելանյա Միսակի Թումասյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոց 12ա շենք թիվ 18 հասցեի բնակարանը վարձակալել է 1980 թվականի հունիսի 30-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի -ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Մելանյա Միսակի Թումասյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի Արվելածե փողոց 12ա շենք, թիվ 18 հասցեի 75.22 (յոթանասունհինգ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

    1) Մելանյա Միսակի Թումասյանին ծնված 1961 թվականին

    որպես սեփականություն :

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Մելանյա Միսակի Թումասյանին :
3. Քաղաքացի՝ Մելանյա Միսակի Թումասյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Մելանյա Միսակի Թումասյանին պատշաճ կարգով իրազեկ հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2024թիվ Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**